ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԹՆԱՋՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ, ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿԻ, ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՀՐԱՀԱՆԳՉԻ, ԼՈԳՈՊԵԴԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

«ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Կաթնաջուրի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը (գտնվելու վայրը ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնք, Կաթնաջուր բնակավայր 1-ին փողոց, 2-րդ փկղ, 5/1 շենք) հայտարարում է նախադպրոցական ուսումնական հաստատության դաստիարակի՝ 1,17 դրույք, երաժշտության դաստիարակի՝ 0,25 դրույք, ֆիզկուլտուրայի հրահանգչի 0,25 դրույք և լոգոպեդի՝ 1 դրույք թափուր պաշտոնները զբաղեցնելու համար մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ):

1. Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԳՄՍ նախարարի 17.02.2022թ-ի N 08-Ն հրամանով հաստատված նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության կարգի 3-րդ մասի 12-րդ կետով պահանջվող փաստաթղթերը.

1) դիմում (Ձև 1).

2) կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3) անձը հաստատող փաստաթուղթ.

4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում).

5) ինքնակենսագրություն (Ձև 4).

6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ.

8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը ներկայացված փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ, բնօրինակները՝ վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ: Մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

Մրցույթին մասնակցելու իրավունք չունի այն անձը, որը՝

1. դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2. դատական կարգով զրկվել է մանկավարժական գործունեությամբ զբաղվելու իրավունքից.

3. տառապում է ՀՀ կառավարության կողմից հաստատված այնպիսի հիվանդությամբ, որը կարող է խոչընդոտել մանկավարժական գործունեության իրականացմանը.

4. դատապարտվել է հանցագործության համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ

դատապարտվել է ոչ դիտավորյալ հանցագործություն կատարելու համար:
Մրցույթը անցկացվելու է՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 17.02.2022 թվականի N 08-Ն հրամանի համաձայն:
Մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 27.03.2024թ-ի N 20-Ն հրամանի.
Փաստաթղթերն ընդունվում են 2026 թվականի հոկտեմբերի 12-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 06-ը ներառյալ ամեն օր ժամը 9:00-ից 18:00, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
ՀՀ Լոռու մարզ, Սպիտակ համայնք, Կաթնաջուր բնակավայր 1-ին փողոց, 2-րդ փկղ, 5/1 շենք :
Մրցույթը անցկացվելու է երկու փուլով թեստավորման և հարցազրույցի ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարի 22.10.2024թ-ի №1981-Ա/2 հրամանի մշակված հարցաշարերի:
Դաստիարակի մրցույթը տեղի կունենա 2026 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 11:00-ին:
Երաժշտության դաստիարակի մրցույթը տեղի կունենա 2026 թվականի նոյեմբերի 10-ին ժամը 15:00-ին:
Ֆիզկուլտուրայի հրահանգչի մրցույթը տեղի կունենա 2026 թվականի նոյեմբերի 11-ին ժամը 11:00-ին:
Լոգոպեդի մրցույթը տեղի կունենա 2026 թվականի նոյեմբերի 11-ին ժամը 15:00-ին:
ՀՀ Լոռու մարզ, Սպիտակ համայնք, Կաթնաջուր բնակավայր 1-ին փողոց, 2-րդ փկղ, 5/1 շենք :
Տեղեկությունների համար զանգահարել՝ 096149124 հեռախոսահամարին: